Արձանագրություն N3

Ապարանի համայնքապետարանի կարիքների համար «ԱՄԱՀ-ԵՐՆՋԱՏԱՓ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի մասին

Ք.Ապարան **«24» Հոկտեմբերի 2018թ.**
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Գնահատող Հանձնաժողովի նախագահ՝	**Աբրահամյան Գոռ – Համայնքի ղեկավարի տեղակալ(ԳԱՊ)**
Հանձնաժողովի անդամներ՝	**Կարապետյան Արկադի – Համայնքի ղեկավարի խորհրդական(ԳԱ)** **Ալեքսանյան Արկադի – Քաղաքաշինության, հողաշինության և ծրագրերի բաժնի պետ(ԲԱ)** **Եղիազարյան Յուրիկ – վարչական տարածքների համակարգման և գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ(ԳԱ)** **Սարգսյան Լևոն - Քաղաքաշինության, հողաշինության և ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ (ԲԱ)**
Գնումները համակարգող՝	**Միեր Ամիրյան – Ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ(ՄՀմ)**

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է դրական եզրակացություն: Հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ մասը, գնահատող հանձանաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ ՍՊԸ	Բավարար
ՌԱԴԻԿ ՇԻՆ ՍՊԸ	Բավարար
ԱԳԼ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ԱՄԱՀ-ԵՐՆՋԱՏԱՓ-ԳՀԱՇՁԲ-18/02 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԱՄԱՀ-ԵՐՆՋԱՏԱՓ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել ՌԱԴԻԿ ՇԻՆ ՍՊԸ -ին:

3.2 Համաձայն ՞Գնումների մասին՞ ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի սահմանել անգործության ժամկետ 5 օրացույցային օր:

3.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և անգործության ժամկետի ավարտից հետո չորս աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակցին տրամադրել պայմանագրի նախագիծը:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հաղթող մասնակցի հետ պայմանագիր կնքելու հաջորդ աշխատանքային օրը՝ ժամը 14:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝		Աբրահամյան Գոռ
հանձնաժողովի անդամներ՝		Կարապետյան Արկադի
		Ալեքսանյան Արկադի
		Եղիազարյան Յուրիկ
		Սարգսյան Լևոն
Գնումները համակարգող ՝		Ամիրյան Միեր